Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-1296-27.03.2026-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի հունիսի 30-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 6-րդ հոդվածի 47-րդ կետը «թարգմանչին,» բառից հետո լրացնել «հոգեբանին,» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 2.1.-ին մասով.

«2.1. Պետական գաղտնիք պարունակող քրեական վարույթներով վարութային գործողությունները ամրագրվում են թղթային եղանակով՝ համակարգչով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ձեռագիր կազմված արձանագրությամբ:»:

Հոդված 3. Օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը «մեղադրյալը» բառից հետո լրացնել «պարտադիր» բառով:

Հոդված 4. Օրենսգրքի 65-րդ հոդվածի 8-րդ մասը «Փորձագետին» բառից հետո լրացնել «, հոգեբանին» բառով:

Հոդված 5. Օրենսգրքի 71-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «թարգմանիչին» բառից հետո լրացնել «,հոգեբանին» բառով:

2) 1-ին մասը «դատական նիստի քարտուղարը» բառերից հետո լրացնել «կամ հոգեբանը» բառերով:

3) 1-ին մասի 2-րդ կետը «թարգմանիչ,» բառից հետո լրացնել «հոգեբան,» բառով:

4) 2-րդ մասը «թարգմանիչ» բառից հետո լրացնել «,հոգեբան» բառով:

Հոդված 6. Օրենսգրքի 125-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 2.1.-ին մասով.

«2.1. Գրավատուի դիմումի և հիմնավորող փաստաթղթերի հիման վրա վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ գրավադրված անշարժ գույքը կարող է փոխարինվել համարժեք այլ գույքով կամ գումարով:»:

Հոդված 7. Օրենսգրքի 123-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 3.1.-ին մասով՝

«3.1. Սույն հոդվածով նախատեսված սահմանափակումները չեն տարածվում օրենքով նախատեսված պարտականությունների կատարմանն ուղղված գործողությունների իրականացման դեպքերի վրա, եթե դրանց չկատարումը կարող է առաջացնել օրենքով նախատեսված պատասխանատվություն: Այդ գործողությունների իրականացման մասին մեղադրյալն անհապաղ տեղեկացնում է վերահսկողություն իրականացնող մարմնին:»:

Հոդված 8. Օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասում «ֆինանսների» բառը փոխարինել «գույքի» բառով:

Հոդված 9. Օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ խմբագրությամբ 3-րդ կետով՝

«3) միջնորդությունը մասնակի բավարարելու և գույքի արգելադրման մասին քննիչի որոշման իրավաչափությունը մասամբ հաստատելու մասին»:

Հոդված 10. Օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասը «իրավասու է» բառերից հետո լրացնել «դատաքննության ցանկացած փուլում» բառերով:

Հոդված 11. Օրենսգիրքը լրացնել հետևյալ խմբագրությամբ 351.1-ին հոդվածով.

«**Հոդված 351.1. Եզրափակիչ դատական ակտ կայացնելուց հետո մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխելը կամ վերացնելը**

1. Եթե մինչև եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը, իսկ այն բողոքարկելու դեպքում՝ բողոքը վերադաս դատարանի կողմից վարույթ ընդունելն ի հայտ է գալիս մեղադրյալի կյանքին սպառնացող վտանգ, դատարանը սեփական նախաձեռնությամբ կամ մեղադրյալի կամ պաշտպանի միջնորդությամբ քննում է խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու հարցը:

2. Դատական նիստն անցկացվում է մեղադրյալի կյանքին սպառնացող վտանգի վերաբերյալ դատարանին հայտնի դառնալուց հետո հնարավոր ամենակարճ ժամկետում:

3. Պատշաճ ծանուցված անձանց բացակայությունը խոչընդոտ չէ դատական նիստն անցկացնելու համար, եթե դատարանն այլ բան չի որոշում:

4. Եթե հարցի քննության արդյունքում դատարանը որոշում է փոխել կամ վերացնել մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը, ապա դատարանի որոշումն անհապաղ հանձնվում է հանրային մեղադրողին, պաշտպանին, մեղադրյալին և խափանման միջոցի կիրառումն ապահովող մարմնին կամ պաշտոնատար անձին:»

Հոդված 12. Օրենսգրքի 407-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 2.2.-րդ մասով.

«2.2. Բացառիկ վերանայման բողոքը վերադարձնելու մասին որոշումն իրավասու դատարանը կայացնում է բողոքն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:»:

Հոդված 13. Օրենսգրքի 408-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 1.1.-ին մասով.

«1.1. Սույն օրենսգրքի 403-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-ին կետով նախատեսված դեպքում բացառիկ վերանայման արդյունքով իրավասու դատարանը փոփոխում է ստորադաս դատարանի դատական ակտը:»:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ստանձնված գործերի քննության վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~*Առաջին ընթերցում*~~

Երկրորդ ընթերցում

Կ-1296-27.03.2026-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ~~ՆԵՐ~~ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի հունիսի 30-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 6-րդ հոդվածի 47-րդ կետը «թարգմանչին,» բառից հետո լրացնել «հոգեբանին,» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 2.1.-ին մասով.

«2.1. Պետական գաղտնիք պարունակող քրեական վարույթներով վարութային գործողությունները ամրագրվում են թղթային եղանակով՝ համակարգչով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ձեռագիր կազմված արձանագրությամբ:»:

Հոդված 3. Օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը «մեղադրյալը» բառից հետո լրացնել «պարտադիր» բառով:

Հոդված 4. Օրենսգրքի 65-րդ հոդվածի 8-րդ մասը «Փորձագետին» բառից հետո լրացնել «, հոգեբանին» բառով:

Հոդված 5. Օրենսգրքի 71-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «թարգմանիչին» բառից հետո լրացնել «,հոգեբանին» բառով:

2) 1-ին մասը «դատական նիստի քարտուղարը» բառերից հետո լրացնել «կամ հոգեբանը» բառերով:

3) 1-ին մասի 2-րդ կետը «թարգմանիչ,» բառից հետո լրացնել «հոգեբան,» բառով:

4) 2-րդ մասը «թարգմանիչ» բառից հետո լրացնել «,հոգեբան» բառով:

Հոդված 6. Օրենսգրքի 125-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 2.1.-ին մասով.

«2.1. Գրավատուի դիմումի և հիմնավորող փաստաթղթերի հիման վրա վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ գրավադրված անշարժ գույքը կարող է փոխարինվել համարժեք այլ գույքով կամ գումարով:»:

Հոդված 7. Օրենսգրքի 123-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 3.1.-ին մասով՝

«3.1. Սույն հոդվածով նախատեսված սահմանափակումները չեն տարածվում օրենքով նախատեսված պարտականությունների կատարմանն ուղղված գործողությունների իրականացման դեպքերի վրա, եթե դրանց

չկատարումը կարող է առաջացնել օրենքով նախատեսված պատասխանատվություն: Այդ գործողությունների իրականացման մասին մեղադրյալն անհապաղ տեղեկացնում է վերահսկողություն իրականացնող մարմնին:»:

Հոդված 8. Օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասում «ֆինանսների» բառը փոխարինել «գույքի» բառով:

Հոդված 9~~7~~. Օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ խմբագրությամբ 3-րդ կետով՝

«3) միջնորդությունը մասնակի բավարարելու և գույքի արգելադրման մասին քննիչի որոշման իրավաչափությունը մասամբ հաստատելու մասին»:

Հոդված 10. Օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասը «իրավասու է» բառերից հետո լրացնել «դատաքննության ցանկացած փուլում» բառերով:

Հոդված 11. Օրենսգիրքը լրացնել հետևյալ խմբագրությամբ 351.1-ին հոդվածով.

«Հոդված 351.1. Եզրափակիչ դատական ակտ կայացնելուց հետո մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխելը կամ վերացնելը

1. Եթե մինչև եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը, իսկ այն բողոքարկելու դեպքում՝ բողոքը վերադաս դատարանի կողմից վարույթ ընդունելն ի հայտ է գալիս մեղադրյալի կյանքին սպառնացող վտանգ, դատարանը սեփական նախաձեռնությամբ կամ մեղադրյալի կամ պաշտպանի միջնորդությամբ քննում է խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու հարցը:

2. Դատական նիստն անցկացվում է մեղադրյալի կյանքին սպառնացող վտանգի վերաբերյալ դատարանին հայտնի դառնալուց հետո հնարավոր ամենակարճ ժամկետում:

3. Պատշաճ ծանուցված անձանց բացակայությունը խոչընդոտ չէ դատական նիստն անցկացնելու համար, եթե դատարանն այլ բան չի որոշում:

4. Եթե հարցի քննության արդյունքում դատարանը որոշում է փոխել կամ վերացնել մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը, ապա դատարանի որոշումն անհապաղ հանձնվում է հանրային մեղադրողին, պաշտպանին, մեղադրյալին և խափանման միջոցի կիրառումն ապահովող մարմնին կամ պաշտոնատար անձին:»

Հոդված ~~8~~12. Օրենսգրքի 407-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 2.2.-~~ին~~ մասով.

«2.2. Բացառիկ վերանայման բողոքը վերադարձնելու մասին որոշումն իրավասու դատարանը կայացնում է բողոքն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:»:

Հոդված ~~9~~13. Օրենսգրքի 408-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 1.1.-ին մասով.

«1.1. Սույն օրենսգրքի 403-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-ին կետով նախատեսված դեպքում բացառիկ վերանայման արդյունքով իրավասու դատարանը փոփոխում է ստորադաս դատարանի դատական ակտը:»:

Հոդված ~~10~~14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ստանձնված գործերի քննության վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1296-27.03.2026-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Կառավարություն**	**Նախագծի 8-րդ հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածում «2.2-ին» գրելաձևը փոխարինել «2.2-րդ» գրելաձևով՝ պահպանելով դասական թվականների ճիշտ գրելաձևը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	**Կառավարություն**	**Նախագիծը լրացնել նոր հոդվածով և համապատասխանաբար փոխել հոդվածների հաջորդականությունը**	Գործող իրավակարգավորումների պայմաններում տնային կալանքի տակ գտնվող մեղադրյալն իր նկատմամբ կիրառված սահմանափակումների պատճառով կարող է զրկվել օրենքով իր վրա դրված պարտականությունների կատարման հնարավորությունից: Մասնավորապես, խոսքն այն պարտականությունների մասին է, որոնց կատարման համար անհրաժեշտ է ունենալ նամակագրություն կամ օգտվել հաղորդակցության միջոցներից: Նման պայմաններում մեղադրյալի կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված պարտականությունների չկատարումը որոշ դեպքերում կարող է հանգեցնել օրենքով նախատեսված պատասխանատվության: Օրինակ՝ տնային կալանքի տակ գտնվող անձը կարող է ունենալ օրենքով սահմանված պարտադիր հայտարարագիր ներկայացնելու, հարկային պարտավորություն կատարելու, պետական	Ընդունվել է:	Ընդունվել: է:

			մարմնին պարտադիր տեղեկատվություն ներկայացնելու, էլեկտրոնային հարթակով հաշվետվություն ուղարկելու, ինչպես նաև օրենքով սահմանված ժամկետում որոշակի գործողություն կատարելու պարտականություններ: Գործող կարգավորման պայմաններում հաղորդակցության սահմանափակումները կարող են փաստացի անհնարին դարձնել նման պարտականությունների կատարումը և առաջացնել վարչական պատասխանատվություն կամ այլ իրավական հետևանքներ: Վերոգրյալի հաշվառմամբ առաջարկում ենք Նախագիծը լրացնել նոր՝ 7-րդ հոդվածով, հետևյալ բովանդակությամբ՝ *«Հոդված 7. Օրենսգրքի 123-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 3.1.-ին մասով՝* *«3.1. Սույն հոդվածով նախատեսված սահմանափակումները չեն տարածվում օրենքով նախատեսված պարտականությունների կատարմանն ուղղված գործողությունների իրականացման դեպքերի վրա, եթե դրանց չկատարումը կարող է առաջացնել օրենքով նախատեսված պատասխանատվություն: Այդ գործողությունների իրականացման մասին մեղադրյալն անհապաղ տեղեկացնում է վերահսկողություն իրականացնող մարմնին:»:* Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք **համապատասխանաբար փոխել հոդվածների հաջորդականությունը:**		

3.	**Կառավարություն**	**Նախագծի վերնագիր, Նախագիծը լրացնել նոր հոդվածով**	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» 2023 թվականի դեկտեմբերի 11-ին ընդունված ՀՕ-401-Ն օրենքով նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը գերազանցող թանկարժեք մետաղների և քարերի, արտարժույթի, արժեթղթերի պահպանման լիազորությունը հանձնվել է պետական գույքի կառավարման լիազոր մարմնին: Նշված փոփոխության հիման վրա 2024 թվականի մայիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 743-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 415-Լ որոշմամբ Ֆինանսների նախարարության կառուցվածքում համապատասխանաբար կատարվել է փոփոխություն և դադարեցվել է նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող՝ թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան բաժնի գործունեությունը: Մինչդեռ, «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հուլիսի 11-ին ընդունված ՀՕ-308-Ն օրենքի համաձայն՝ Օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ Նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը	Ընդունվել է:	Ընդունվել է:

			գերազանցող թանկարժեք մետաղները և քարերը, արտարժույթը, արժեթղթերը պահպանման համար հանձնվում են պետական ֆինանսների կառավարման լիազոր մարմնին, Հայաստանի Հանրապետության դրամը դատական վարույթի ընթացքում մուծվում է դատարանի դեպոզիտ, իսկ մինչդատական վարույթում՝ դատախազության դեպոզիտ:»: Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք Քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել համապատասխան փոփոխություն և որպես լիազոր մարմին ճանաչել պետական գույքի կառավարման լիազոր մարմնին: Այսպիսով, առաջարկում ենք Նախագիծը լրացնել նոր՝ 8-րդ հոդվածով, հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 8. Օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասում «ֆինանսների» բառը փոխարինել «գույքի» բառով:» Վերոգրյալի հիման վրա, առաջարկում ենք **համապատասխանաբար փոխել հոդվածների հաջորդականությունը, ինչպես նաև** փոխել Նախագծի վերնագիրը՝ հաշվի առնելով, որ նախագծով կատարվում են լրացումներ, և առաջարկվում է կատարել միայն մեկ փոփոխություն**:**		
4.	**Կառավարություն**	**Նախագիծը լրացնել նոր հոդվածով**	Քրեական դատավարության օրենսգիրքը չի կարգավորում այն դեպքերը, երբ եզրափակիչ դատական ակտ կայացնելուց հետո, սակայն մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելը կամ բողոք ներկայացնելու դեպքում՝ բողոքը վերադաս ատյանի կողմից վարույթ ընդունելը, ի հայտ են գալիս մեղադրյալի կյանքին սպառնացող	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հանգամանքներ, որոնք կարող են հիմնավորել կիրառված խափանման միջոցի (հատկապես կալանք խափանման միջոցի) փոփոխման կամ վերացման անհրաժեշտությունը: Արդյունքում բացակայում է դատարանի կողմից նման հարցերի հրատապ քննության հստակ ընթացակարգը, ինչը գործնականում կարող է հանգեցնել, օրինակ, խափանման միջոցի հետ անհամատեղելի հիվանդություն ունեցող մեղադրյալի կյանքի կամ առողջության վատթարացման: Ուստի առաջարկում ենք Նախագիծը լրացնել նոր հոդվածով, հետևյալ բովանդակությամբ՝ «Օրենսգիրքը լրացնել հետևյալ խմբագրությամբ 351.1-ին հոդվածով. «**Հոդված 351.1. Եզրափակիչ դատական ակտ կայացնելուց հետո մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխելը կամ վերացնելը** 1. Եթե մինչև եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը, իսկ այն բողոքարկելու դեպքում՝ բողոքը վերադաս դատարանի կողմից վարույթ ընդունելն ի հայտ է գալիս մեղադրյալի կյանքին սպառնացող վտանգ, դատարանը սեփական նախաձեռնությամբ կամ մեղադրյալի կամ պաշտպանի միջնորդությամբ քննում է խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու հարցը: 2. Դատական նիստը անցկացվում է մեղադրյալի կյանքին սպառնացող վտանգի վերաբերյալ դատարանին հայտնի		

			դառնալուց հետո հնարավոր ամենակարճ ժամկետում: 3. Պատշաճ ծանուցված անձանց բացակայությունը խոչընդոտ չէ դատական նիստն անցկացնելու համար, եթե դատարանն այլ բան չի որոշում: 4. Եթե հարցի քննության արդյունքում դատարանը որոշում է փոխել կամ վերացնել մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը, ապա դատարանի որոշումն անհապաղ հանձնվում է հանրային մեղադրողին, պաշտպանին, մեղադրյալին և խափանման միջոցի կիրառումն ապահովող մարմնին կամ պաշտոնատար անձին:»: Առաջարկվող կարգավորումը հնարավորություն կտա դատարանին արագ արձագանքել մեղադրյալի կյանքի կամ առողջության համար առաջացած անմիջական վտանգներին՝ մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը կամ բողոքի առկայության դեպքում՝ մինչև բողոքը վերադաս ատյանի կողմից վարույթ ընդունելը, ինչն անհրաժեշտ է մարդու կյանքի իրավունքի արդյունավետ պաշտպանության տեսանկյունից:»:		
	Պատգամավոր Արուսյակ Ջուլհակյան	**Նախագիծը լրացնել նոր հոդվածով**	Առաջարկում ենք Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. «Օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասը «իրավասու է» բառերից հետո լրացնել «դատաքննության ցանկացած փուլում» բառերով:»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների համակարգային, մասնավորապես 333-րդ և 334-րդ հոդվածների համադրված վերլուծությունից բխում է, որ դատարանը կարող է սեփական	Ընդունվել է:	Ընդունվել է:

			նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ փորձաքննություն նշանակել միայն հետազոտման ենթակա ապացույցների ծավալը սպառելուց հետո: Մինչդեռ, հատկանշական է, որ դատարանը, ստանալով քրեական գործը և ծանոթանալով դրան, կարող է ի սկզբանե տեսնել փորձաքննություն նշանակելու (օրինակ այն դեպքում, երբ այն նշանակված չի եղել) անհրաժեշտություն: Գործող կարգավորումների պայմաններում՝ դատարանը պետք է սպառի ապացույցների ծավալը և հիմնական դատալսումների ավարտին նշանակի փորձաքննություն, որի կատարումը կարող է տևել շատ երկար: Ստացվում է՝ դատարանը սպառում է գործի ըստ էության լուծմանն ուղղված հիմնական բոլոր միջոցները և միայն փորձաքննության եզրակացությունը ստանալու համար անորոշ ժամկետով հետաձգում դատական նիստերը և վերջնական դատական ակտի կայացումը: Ավելին, անդրադառնալով լրացուցիչ դատալսումների փուլին՝ հարկ է նկատել, որ այդ փուլում քննարկվում են, ի թիվս այլնի, պատժի վերաբերյալ հարցերը, և դատարանը պետք է այդ փուլում որոշի՝ ինչ պատիժ պետք է նշանակվի դատապարտված մեղադրյալի նկատմամբ և դատապարտված մեղադրյալը արդյո՞ք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը: Այս համատեքստում, հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ եթե հանցանքը կատարելուց հետո, բայց մինչև դատավճիռ կայացնելը անձի մոտ ի հայտ է		

			եկել հոգեկան առողջության այնպիսի խնդիր կամ այլ հիվանդություն, որն անհնարին է դարձնում պատիժ նշանակելը, ապա պատժի նշանակումը հետաձգվում է: Նման պայմաններում, պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդության մասին տվյալներ կարող են ի հայտ գալ լրացուցիչ դատալսումների փուլում, իսկ պատժի հետաձգումը կամ դրանից ազատումը կարող է իրականացվել միայն դատահոգեբուժական կամ դատաբժշկական փորձաքննության եզրակացության հիման վրա: Հետևաբար՝ գտնում ենք, որ այս փուլում ևս դատարանը պետք է հնարավորություն ունենա նշանակել փորձաքննություն:		
	Պատգամավոր Արուսյակ Ջուլհակյան		Առաջարկում ենք Նախագծով սահմանել անցումային դրույթ՝ հստակեցնելով, որ Նախագծով առաջարկվող կարգավորումները տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ստանձնված գործերի քննության վրա: Մասնավորապես, առաջարկում ենք անցումային դրույթը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ստանձնված գործերի քննության վրա:»:	Ընդունվել է:	Ընդունվել է: